

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԵՌԱԽՈՍԱԿԱՊԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆՄԱՆ՝ 03.07.2013
ԹՎԱԿԱՆԻ N «112760054 S4002»
ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ք. Երևան

«03» «04» 2017թ.

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, ի դեմս նախարարության աշխատակազմի ղեկավար Ա. Գրիգորյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գնորդ), մի կողմից, և «ԱրմենՏել» ՓԲԸ-ն, ի դեմս լիազորված անձ Գառնիկ Տիտանյանի (այսուհետ՝ Վաճառող), մյուս կողմից, հիմք ընդունելով 03.07.2013թ. N «112760054 S4002» պայմանագրի 6.4 կետը, կնքեցին սույն Համաձայնագիրը հետևյալի մասին.

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

- 1.1 03.07.2013թ. N «ԱՍՀՆ-ՇՀԱՊՁԲ-17/1-Ա» պայմանագրում (այսուհետ՝ Պայմանագիր) կատարել հետևյալ փոփոխությունները.
- 1.2 Սահմանել մատուցվող հեռախոսակապի ծառայությունների նոր սակագներ՝ համաձայն N 1 հավելվածի:

2. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

- 2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում և Կողմերի համար պարտադիր է դառնում կնքման պահից:
- 2.2 Կողմերի միջև նախկինում ձեռք բերված բոլոր գրավոր համաձայնությունները գործում են այնքանով, որքանով չեն հակասում սույն Համաձայնագրի դրույթներին:

3. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

- 3.1 Կողմերը պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
- 3.2 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:
- 3.3 Սույն Համաձայնագիրը կազմված է 1 էջից, Համաձայնագրով հաստատված N 1 Հավելվածը՝ 1 էջից: Համաձայնագիրը կնքվում է 2 օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:
- 3.4 Սույն Համաձայնագիրը և սույն Համաձայնագրով հաստատված Հավելվածը հանդիսանում են Պայմանագրի անբաժանելի մասը

ԳՆՈՐԴ

ՎԱՃԱՌՈՂ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի
նախարարություն

Հասցե՝ ք. Երևան, Կառավարական շենք N 3
Բանկի անվանումը՝ ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
h/h 900011016988
ՀՎՀՀ 01506515

«ԱրմենՏել» ՓԲԸ

Հասցե՝ ք. Երևան, Ահարոնյան 2
Բանկի անվանումը՝ Հայէկոնոմբանկ
h/h 900011077048
ՀՎՀՀ 02500052

Աշխատակազմի
ղեկավար

Ա. Գրիգորյան

Կ.Տ.

Լիազորված անձ

Գ. Տիտանյան

Կ.

